



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 31 ” օգոստոսի 2011թ

№131 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ 13-Ը «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀԱԿԱԶԴՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ, 1.6-րդ, 1.21-րդ, և 1.22-րդ կետերի դրույթներով և համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի՝ ՀՀ Սյունիքի մարզպետին 2011 թվականի օգոստոսի 19-ի N1/17/1583-11 գրությամբ ներկայացված առաջարկության, ՀՀ Սյունիքի մարզում 2011 թվականի սեպտեմբերի 12-ից 13-ը անցկացվելիք «Անտառային հրդեհների հակազդում» թեմայով հրամանատարական շտաբային ուսումնավարժանքի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով **որոշում եմ.**

1. Շտաբային ուսումնավարժությունում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի մարտի 9-ի N 28 որոշմամբ ստեղծված ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, «Հայանտառ» ՊՈԱԿ Կապանի, Սյունիքի, Սիսիանի մասնաճյուղերը, «Շիկահող պետական արգելոց», «Արևիկ ազգային պարկ» ՊՈԱԿ-ները, ՀՀ Սյունիքի մարզի Գեղանուշ գյուղական համայնքը, քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունները:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչություն պետ Ա. Հարությունյանին.

1) Համակարգել «Անտառային հրդեհների հակազդում» թեմայով հրամանատարական շտաբային ուսումնավարժանքի շտաբային ուսումնավարժությանը մասնակցող կազմակերպությունների, Գեղանուշ գյուղական համայնքի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների նախապատրաստական աշխատանքները:

2) Կազմակերպել շտաբային ուսումնավարժության անցկացման վայրում շարժական կառավարման կետ տեղակայելու և դրա համապատասխան կահավորումն ապահովելու աշխատանքները:


3. «Հայանտառ» ՊՈԱԿ Կապանի, Սյունիքի, Սիսիանի մասնաճյուղերի, «Շիկահող պետական արգելոց», «Արևիկ ազգային պարկ» ՊՈԱԿ-ների, ՀՀ Սյունիքի մարզի Գեղանուշ գյուղական համայնքի և քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ղեկավարներին.

Կազմակերպել շտաբային ուսումնավարժության նախապատրաստական աշխատանքների իրականացումը, կատարել քաղաքացիական պաշտպանության ուժերի, անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների հաշվարկները և արդյունքների մասին պարբերաբար տեղեկացնել ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ



2011թ. օգոստոսի 31
ք. Կապան